համարձակութիւն տայ նմա Վարսակայ ունել մարգարտեայ։ Մեղացիք յարևելից եկին ԾՍ. զօրօք հարկաւորել ըզ-Հայս։ Եւ Արամ քաջ ել ընդ դէմ նոցա և կոտորեաց զնոսա։ Եւ զՆիւքար կոչեցեալ՝ զբռնաւորն Մարդէս կալեալ եբեր 'ի պարիսպն յԱրմաւիր։ Բարշամ ոմն Ասորի՝ հսկայ, զոր յետոյ 'ի շատ ժամանակս իբրև զաստուած պաշտեցին ազգն Ասորոց, եկն 'ի վերայ Արամայ ԽՍ. հեծելօք և ԽՍ. հետևակօք։ Եւ Արամ ել ընդ առաջ նորա և փախստական արար զզօրսն նորա։ Եւ Բարշամ անկաւ առաջի զինու նորա։

Պայապիս Քայաղ (Քաղեայ) տիրանեան ոմն, որ տիրէր 'ի մէջ երկուց ծովուց Պոնտոսի և Ովկիանոսի, և յառաջ խաղացեալ էր, գնաց Արամ 'ի վերայ նորա և կոտորեալ հալածեաց զզօրս նորա մինչև յեզր ծովուն և կղզոյն, և դարձաւ 'ի Կապադովկիայ։ Եդ զՄշակ ոմն անդ բռնաւոր, և հրամայեաց շինել քաղաք. զոր

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան